

ըի գնտակին երեսէն չափելով 29  
բթաշափի կը համնի . աս գծին դիմա-  
ցը գրուած կ'ըլլայ անդուռի . այսինքն  
թէ օդը շատ աղէկ է : Ամենէն վարի  
դիմը , որ նոյնպէս գնտակին երեսէն  
առնելով քսանը եօթներորդ բթաշա-  
փը կուգայ , կը ցուցընէ մնդկին խիստ  
ցած աստիճանը . աս գծին դիմացն  
ալ գրուած է նրիկ : Ասկէ մէկ աս-  
տիճան վեր , այսինքն 28 բթաշափին  
դիմացը գրուած է դոդիսական : Ասկէ  
քիչ մը վար եղած գծին առջել գրած  
է հողմ և անչըն . վասն զի հովն ալ ան-  
ձրեային օդի պէս խողովակին մնդիկը  
կ'իջեցընէ . Յատերը այլեայլ ձեւ-  
րով կը շինեն օդաշափը . մեր հոս բա-  
ցատրածը ամենէն պարզն է :

### Վ քաշարժ է երիալի ճանապարհ :

Յ իւթլըլըրթ անգղիացին նոր  
կերպով ջրաշարժ մեքենայ մը առա-  
ջարկեց , և հրամանագիր առաւ որ  
ինքը միայն կարենայ գործածել աս  
գիւտը երկաթի ճամբաներու վը-  
րայ : — Ո'եքենային շարժիչ զօրու-  
թիւնը ջրին վազուածքը չէ , հապա  
ջրին Ճնշումն է . այսինքն որովհետեւ  
32 ոտնաչափ բարձրութե՛ ջրին սիւ-  
նակին Ճնշումը հաւասար է ամբողջ  
մթնոլորտի մը Ճնշմանը , չեղինակը  
մտածեր է որ ջրին սիւնակը թէ որ  
60 մեթր բարձրացընելու ըլլայ , ա-  
նոր տուած Ճնշումը հինգ կամ վեց  
մթնոլորտի ծանրութեան կը հաւա-  
սարի , աս զօրութիւնը՝ ի գործ դնելու  
ըլլայ՝ մեքենայ մը շարժելու նէ , մե-  
քենան մէկ ժամու մէջ 44 քիլոմեթր  
տեղ կրնայ վազել : Ուստի մտածեց  
որ երկրթէ Ճամբուն երկայնութեա-  
նը վրայ շինուին ջրի զանազան ընդու-  
նարաններ՝ 60 մեթր բարձրութեամբ ,  
և ան ջուրը խողովակներով հաղոր-  
դուի շարժիչ մեքենային : Աս բանիս

գործածութիւնը որչափ ալ դժուա-  
րին երենայ , չեղինակը ամենայն  
վստահութեամբ կը խոստանայ որ չէ  
թէ միայն կը յաջողի , հապա նաև  
գործածութիւնն ու ծախքն ալ հա-  
սարակ շոգեկառքերէն անհամեմատ  
կերպով աւելի շահաւոր կ'ըլլայ :

### Ո'էծ դէտակն :

Ո'ւս կոմսը Անգղիայի մէջ հայե-  
լադիտակ մը շինել տուաւ որ միայն  
հայլիին ծանրութիւնն է 1015 քիլո-  
կրամ . խողովակին մէջի տրամագիծն  
է 2 մեթր ու 40 հարիւրամեթր . խո-  
ղովակին երկայնութիւնը 23մ,50 : Ան-  
դին կը շինել հաստ տախտակներէ շի-  
նած է՝ երկաթէ շրջանակներով կա-  
պուած , և բոլորը մէկէն հաստա-  
տուն ծխնիներու վրայ կը պտըտի :  
Ասկայածե գիտակը չկրնար երկըն  
քին ամէն դին դառնալ , հապա հա-  
զիւթէ միջօրէին երկու կողմը եօթ-  
նական աստիճան . անոր համար եր-  
կու հաստատուն պատերու մէջ կա-  
խուած է աս գիտակը , ու մեծամեծ  
անիւներով ամէն մէկ վայրկեանին  
յարմար հորիզոնական շարժում  
կ'առնէ միջօրէականին վրայ . հակա-  
քարշ ծանրոցներով ալ գիւրաւ կ'ել-  
լէ ու կ'իջնայ՝ ինչպէս որ գիտողը  
ուզէ :

### Բնական ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

#### Փարաւոնի մուկը :

Ա,ԵՂՈՍԻ կոկորդիլոսին մասնաւոր  
թշնամին մէկ պզտի կենդանի մըն է  
որ Հիլոս կամ Փարաւոնի մուկ կ'ը-  
սուի : Աւելորդապաշտ Ագիպտացի-  
ները կոկորդիլոսը աստուծոյ տեղ  
դրած կը պաշտէին . անոր նուիրած  
էին Արսինոյէ քաղաքը , ու սատակը  
իրենց թագաւորներուն գերեզմանին



**ԺՐԱՏԱՆԻ ՏՐԱԿ :**

ՄԵՋԸ ԿԸ ԹԱՂԵՒՆ . ՆՈՅՆԱՊԵՍ ՀԻԼՈՍՆ  
ԱԼ ՍՈւԾՔՔ ԿԵՆԴԱՆԻԻ ՄԸ ՄԵՂ ԿԸ ԴՆԵՒՆ ,  
աղեկ կը հոգային , ու հասարակաց  
ծախքովը կաթի մէջ բրդած հացով՝  
կամ՝ լեղոսի ձուկերովը կը կերա-  
կրէն , ու մեծ յանցանք կը սեպէնն  
զանիկայ սպաննելը : Եղիպտացւոց  
հիլոսին այսչափ պատիւ տալուն սպատ-  
ճառը ան էր որ աս կենդանին անդա-  
դար ետեւէ կ'ըլլայ ու կը ջարդէ վնա-  
սակար օձերն ու ձձիները , որ ան թաց  
ու տաք երկիրները շատ կը գտնուին :  
Իս վնասակար կենդանիներուն հետ-  
քնական թշնամութիւն մը ունի հի-  
լոսը . իսկ կոկորդիլոսներուն՝ մեծ ո-  
ձերուն ու մողէսներուն անհամար  
բազմութիւնը՝ անոնց հաւկիթները

փշացընելով կը քիցընէ . ապա թէ  
ոչ հիլոսը այնչափ պզտիկ է որ և ոչ  
իմուսփիրամիս ըսոււած պզտի մողեսին  
կրնայ յաղթել : Երբոր սաստիկ կ'ա-  
նօթենայ , կ'երթայ իրիկուան դէմ  
կը կծկի արտերուն մէջ ծակուծուկ  
տեղուանք , ու կը սպասէ որ իրեն որս  
մը հանդիպի :

Հիլոսը հաւկըթէն զատկ'ուտէնաե  
մկներ , պզտի օձեր ու թռչուններ :  
լեղոսի բարձրացած ատենը գեղերը  
կ'երթայ ու հաւնոցներուն հաւերը  
կը ջարդէ : Իսկ ան որ կ'ըսեն թէ հի-  
լոսը կոկորդիլոսին քնացած ատենը  
կ'երթայ բերնէն փորը կը մտնէ ու ա-  
ղիքները կը կրծէ՝ իրաւ չէ , հապա  
կոկորդիլոսին հաւկիթները ջարդէ .

լէն ելած առասպել է :

Յ ատ երկայնմոռւթիւն կըքանեցընէ՝ հիլուը իր որսը գտնելու համար, ու երբեմն երկար ատեն անշարժ կծկըտած կը դարանի : Այնայդիւրաւ ընտանենալ, ու տան մէջ կատուի տեղ գործածուիլ միները ջարդելու համար . և ընտանենալէն ետքը իրեն բնակած տունը շատ կը սիրէ, ու զինքը կրթողներուն կը հընազանդի : Այս դին ան դին չպատրտիր, ու չուզեր նորէն իրեն վայրենի վիճակը դառնալ . երբոր կորսուելու ալըլայ, իր առջի տէրը կամ տունը կը փնտըռէ կը գտնէ ու կը սկսի քըծնիլ : Բայց կերակուր կերած ատենը իր անուշութիւնը կը կորսունցընէ . մէկ անկիւն մը կըքաշուի, ու թէ որ կասկածի թէ որսը ձեռքէն պիտի առնեն՝ սաստիկ կը կատղի : Ոճէ որ իրեն մէկ չձանցած տեղը երթայ, ամէն կողմերը կըքննէ, մանաւանդ իր հոտառութեամբը՝ որ մէկալ ըզդ գայարանքներէն աւելի զօրաւոր է :

Հիլուին գոյնը սե է՝ ձերմակ բծերով, մազերը խիտ ու չոր : Ականջներէն ինչուան պոչին արմատը մէկ ոտնաչափէն աւելի չէ . ականջներուն ետեի կողմէն ինչուան քթին ծայրը իրեք բթաչափէն քիչ մը աւելի է . պոչը մէկ ոտք ու չորս բթաչափ է, իսկ բարձրութին է եօթը բթաչափ :

Բնաբանները շատոնց գիտէին հիլուին անունը, բայց իր ստորագրութիւնը որոշչէին կրցած ընելինչուան մօտ տարիներս . անոր համար շատը այլեայլ անուն ալ կուտան ասոր ինչուան հիմա :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Համար :

ՀԱՃԱՐԸ՝ խիստ օգտակար արմետիքներէն մէկն է . մէյմը որ տնական տնտեսութեան մէջ շատ կը գործածուի, մէյմըն ալ որ ան երկիրներուն մէջ ուր որ ցորենը ամենենին առաջ չգար, կամ խիստ քիչ կըքումնի, հաճարը աղէկ կը մեծնայ և առատ բերք կուտայ : Այսոր հունտը թէպէտ և ցորենին պէս ձերմակ ու անոր չափ մնընդարար չէ, բայց ասկէ ալ շատ աղէկ ու համեղ հաց կըշինուի ու երկայն ատեն թարմկը մնայ, մանաւանդ երբ որ ցորենի ալիւրին հետ խառնուի . և աս հացը ոչ միայն մարդիկ կ'ուտեն, հապա տեղ տեղ ձիերու ալ կըկերցնեն . երբեմն ալ խոշոր աղալէն ետքը՝ այլեայլ չափով կըխառնէն նոյնպէս խոշոր աղացած վարսակի, գարիի, սիսեռի, ոսպի ու բակլայի ալիւրին հետ, և այնպէս կը գործածէն : Հաճարը կը գործածուի նաև հաւերը գիրցներու, և օղի ու գարեջուր շինելու :

Հաճարը քանի որ թարմէ՝ կանաչ խոտի տեղ կրնայ տրուիլ կենդանեաց, մանաւանդ յոգնած ձիերուն ու կաթընտու կովերուն . իսկ հաճարին յարդը հունտէն աւելի յարգի է, ու կը գործածուի կենդանեաց ոտքին տակը փուելու, և ոչխարներուն՝ կովերուն ու եզներուն կերցընելու . ասկէ կըշինեն նաև խսիրներ, աթոռներ ու գլխարկներ, և նաև տնակներու ծածքեր :

Հաճարէն յարմար հողերը : — Հաճարին յարմար հող գտնելը ցորենինէն աւելի դիւրին է . կրնանք ըսել թէ ո՛ և իցէ հող երբոր չափազանց խոնաւ